ՅՈՎՍԷՓ ՃԻԱԳՈԶԱ

# ԻՆՉՊԷՍ ՏԵՐԵՒՆԵՐԸ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ՉՈՐՍ ՀԱՆԴԷՍՈՎ

(*Շար. տես. 1 Օգոս. թիւ էջ* 3)

## ՏԵՍԻԼ ՎԵՑԵՐՈՐԴ

ՅՈՒԼԻԱ, ՀԵԼՄԷՐ *և* ՆԷՆՆԷԼԼԷ։

ՆԷՆՆԷԼԼԷ *սեղանին վրայէն գիրք մը կ'առնէ և կ'երթայ կը նստի պատուհանին անկիւնը։*

ՀԵԼՄԷՐ

*Ակումբին ցուցակին մէջ յիշատակուած պիտի ըլլային։ Բայց ժընէվական ժողովակը չուզեց ճանչնալ։ Կը գովեն, բայց կ'ըսեն թէ դուք միայն երեք ամսէ ի վեր հոս էք և թէ կրնաք սպասել։*

ՅՈՒԼԻԱ

*Սպասե՜լ։ Եւ արուեստը պիտի թողում։*

ՀԵԼՄԷՐ

*Սրբապիղծ բաներ մի ըսէք։ Արուեստը չի ձգուիր։ Արեան մէջ է։ Բաղդովի, մէկ բարեկամս զանոնք տեսաւ, սիրահօրուեցաւ և ինծի յանձնեց որ գնեմ։*

ՅՈՒԼԻԱ

*Բոլո՞րն ալ։*

ՀԵԼՄԷՐ

*Հիմակուհիմայ մէկ.... կամ երկուք։ Երկուք, երկուք։ Ակումբին քարտուղարին հետ պայմաններուն վրայ պիտի խօսիմ։ Այս բաներուս վրայ մեր մէջը չի կրնար խօսուիլ։*

ՅՈՒԼԻԱ

*Լսեցի՞ր, Նէննէլէ։*

ՆԷՆՆԷԼԼԷ

*Կարծեմ։ Այո՛։*

ՅՈՒԼԻԱ

*Երկու ուրուանկար ծախեցի։ Կ'ախորժիմ որ դու գիտնաս։*

ՆԷՆՆԷԼԼԷ

*Զանոնք ո՞վ գնեց։*

ՀԵԼՄԷՐ *թեթեւ շուարումով։*

*Իմ մէկ հայրենակիցս։ Արուեստի մեծ սիրող մը։*

ՆԷՆՆԷԼԼԷ

*Ա՛հ։ Ա՛հ։*

ՀԵԼՄԷՐ *կամացուկ Յուլիային։*

*Ալ չէք տեսնուիր։ Երկո՛ւ առաւօտ հոս վարը եկայ։*

ՅՈՒԼԻԱ *ի. վ.*

*Ինքը եղաւ։*

*Նէննէլէի։*

*Ինծի հաճոյք մը ընէիր, Նէննէլէ, վար իջնալու, ուր որ կը պահեմ նկարչութեան գործիքներս, և գոյներու մեծ դարանին մէջէն առնէիր ինծի այն տախտակիկը որ հազիւ ուրուագծուած պիտի գտնաս։ Զգուշացիր թաց է։*

ՀԵԼՄԷՐ

*Եթէ կարենայի ես։*

ՆԷՆՆԷԼԼԷ *կ'ելլայ առանց խօսք ըսելու։*

## ՏԵՍԻԼ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ՅՈՒԼԻԱ *և* ՀԵԼՄԷՐ։

ՅՈՒԼԻԱ

*Ձեզի փոքրիկ յիշատակ մը ունիմ։ Սպասեցէք։*

*Կը վազէ իր սենեակը։*

ՀԵԼՄԷՐ *կը նայի ուրուանկարներուն։*

*Հարիւ՜ր ֆրանքով։*

ՅՈՒԼԻԱ *կը դառնայ կենդանագիրով մը, ձեւ* cabinet, *արծաթէ շրջանակի մը մէջ, ադնիւ թղթով փաթթուած, կու տայ զայն Հելմէրի։*

*Վարպետին և բարեկամին։*

ՀԵԼՄԷՐ

*Ձե՞ր կենդանագիրը։ Ի՜նչպէս աղուոր է։ Ի՜նչպէս աղուոր էք։ Եւ ինչ ընտիր շրջանակ։ Ի՜նչպէս աղէկ կը շրջանակէ զձեզ արծաթին ցուրտ սպիտակութիւնը։ Սիրուն բան մը՝ Շնորհակալ եմ։*

*Ձեռքերը կը համբուրէ։*

ՅՈՒԼԻԱ

*Շուտ մը թուղթի մէջ փաթթեցէք և մէկ կողմ դրէք.... շուտ որ ինքը չի տեսնայ։*

*Կը փաթթէ պատկերը ադնիւ թուղթի մէջ։ Հելմէր գրպանը կը դնէ։*

*Ութ օրէ ի վեր միշտ ինծի հետ դուրս կ'ելլայ, հետս կ'ընկերէ ամէն տեղ։ Միւս առաւօտ զձեզ տեսայ, կ'ուզէի իջնալ, բայց.... ինքն ալ հոս դար։ Կեա՛նք մը որ՝*

ՀԵԼՄԷՐ

*Վարժուեցայ ձեզի հետ աշխատելու։ Եթէ զձեզ չի տեսնամ, տիեզերքը կ'անհետանայ, իրերը ալ ոչ ձայն ոչ գոյն ունին և ինծի ալ բան մը չեն հաղորդեր։*

digitised by A.R.A.R.@

ՅՈՒԼԻԱ

Ի՞նչ ընելու է։

ՀԵԼՄԵՐ

Գտեր էի այսպիսի գեղեցիկ տեղ մը։ Լճին միւս ափունքը։ Հօգեհոյզ և չքեղ Թագաւոր մը։

ՅՈՒԼԻԱ

Վրան մի խօսիք։

ՀԵԼՄԵՐ

Կարելի՞ բան է որ չի յաջողիք վայրկեան մը ազատ ըլլալու։ Կ'ուզէի ու տեսնայիք զայն։

ՅՈՒԼԻԱ

Ո՞ւր է։

ՀԵԼՄԵՐ

Ահ, ոչ։ Ձեզ հոն կ'ուզեմ տանիլ։

ՅՈՒԼԻԱ

Անկարելի է ձեզի հետ։

ՀԵԼՄԵՐ

Իմ ամէն խաղաղութիւնս առիք վերուցիք։

ՅՈՒԼԻԱ

Պէտք չէ ականջ դնեմ այդ խօսքերուն։ Հեռու է։

ՀԵԼՄԵՐ

Ոչ։ Կու գայ նաեւ ծեր ընկերս։ Ցոյս կու տա՞ք։

ՅՈՒԼԻԱ

Կը բաղձայի։ Աւելին մի խնդրէք։ Ազատ չեմ։

ՀԵԼՄԵՐ

Բայց բնաւ դուրս չե՞րթար օրիորդը։

ՅՈՒԼԻԱ

Շաբաթը երկու անգամ քաղաքին մէջ դաս ունի։

ՀԵԼՄԵՐ

Ե՞րբ։ Վաղը։

ՅՈՒԼԻԱ

Վաղը ունի։

ՀԵԼՄԵՐ

Ակումբը կը սպասեմ ձեզի։ Ո՞ր ժամուն։

ՅՈՒԼԻԱ

Ոչ, ո՛չ, վաղը չեմ ուզեր։

ՀԵԼՄԵՐ

Ինչո՞ւ։

ՅՈՒԼԻԱ

Ուրբաթ օր է։ Երբեք։

ՀԵԼՄԵՐ

Շաբաթ օր։

ՅՈՒԼԻԱ

Դաս չունի։

ՀԵԼՄԵՐ

Կիրակի։

ՅՈՒԼԻԱ

Կիրակի։ Կիրակի թերեւս կարենամ.... Հոս է կու գայ։ Բարձր խօսէ։

ՀԵԼՄԵՐ

Իրապաշտները չեն ուզեր հասկնալ որ խորհրդական պատկերը....

## ՏԵՍԻԼ ՈՒԹԵՐՈՐԴ

Նէննէլէ և վերոյիշեալները։

*Նէննէլէ կը մնայ առանց խօսելու և կերթայ կը նստի ուր որ էր առաջ։*

ՅՈՒԼԻԱ

Ի՞նչ ըրիր։

ՆԷՆՆԷԼԷ

Տախտակիկ մըն ալ չկար, ոչ ուրուագծուած, ոչ ուրուագծելի։

ՅՈՒԼԻԱ

Չի գտա՞ր։ Պզտիկ դարակին մէջ։

ՆԷՆՆԷԼԷ

Ինծի ըսած էիր մեծին, բայց պզտիկին մէջն ալ նայեցայ։

ՅՈՒԼԻԱ

Տարօրինակ է.... վասն զի։

ՆԷՆՆԷԼԷ

Ո՛հ, մայր։

ՀԵԼՄԵՐ

Կրնամ տանիլ ուղղակի այս ուրուանկարներս։

ՅՈՒԼԻԱ

Ինչպէս կ'ուզէք։ Թուղթի մէջ կը փաթթեմ։

*Կ'առնէ երկու ուրուանկարները։*

Այս երկո՞ւքը։

ՀԵԼՄԵՐ

Ամէնքն ալ աղուոր են։ Դուք ընտրեցէք։

## ՏԵՍԻԼ ԻՆՆԵՐՈՐԴ

Մաքսիմոս և վերոյիշեալները։

ՄԱՔՍԻՄՈՍ

Շատ ուշ մնաց։

ՅՈՒԼԻԱ

Օ Մաքս։

ՄԱՔՍԻՄՈՍ

Բարի լոյս, Հօրաքոյր։

*Նէննէլէին։*

Ի՞նչպէս ես։

digitised by A.R.A.R.@

ՆԷՆՆԷԼԼ

Քեզի կը սպասէի։

ՄԱՔՍԻՄՈՍ

Հազար արկածներ։

*Կը տեսնայ Յուլիան ձեռքը երկու ալբոմնկարներով։*

Քու նկարնե՞րդ են անոնք։

ՅՈՒԼԻԱ

Պիտի չի հաւնիս։

ՄԱՔՍԻՄՈՍ

Ցուցուր։ Կը հաւնիմ։

ՅՈՒԼԻԱ

Իրա՞ւ։

ՄԱՔՍԻՄՈՍ

Իրաւցնէ կը հաւնիմ։ Ձեմ գիտեր թէ դու իրրեւ գովեստ պէտք է առնես։

ՀԵԼՄԷՐ

Արուեստը կը զգացուի, չի պատճառաբանուիր։

ՄԱՔՍԻՄՈՍ

Ներեցէք, պարոն, ես կը պատճառաբանեմ։ Ինծի հաճելի է նկարչութիւնը որ չեմ հասկնար եւ ինծի հաճելի է վասն զի չեմ հասկնար։

ՀԵԼՄԷՐ

Գաղտնիքին թափանցողութիւնը։

ՄԱՔՍԻՄՈՍ

Է՞հ։

ՀԵԼՄԷՐ

Կ՚ըսեմ՝ գաղտնիքին թափանցողութիւնը։

ՄԱՔՍԻՄՈՍ

Ահաւասիկ։ Ձեր ըսածը եթէ նկարչութեան մէջ ըլլար, հաւնէի պիտի։ Ցատկ խօսող պատկերները՝ միշտ անոնք են։ Անոնք կը հրամայեն։ Անտառ մըն է։ Մարգագետին մըն է։ Եւ ես միշտ տրամադիր չեմ ախորժելու անտառէ մը եւ մարգագետինէ մը։ Ընդհակառակն ասոնց մէջ, ինչ որ կ՚ուզեմ կը տեսնամ, նոյն վայրկեանուան քմահաճոյքին համեմատ։ Ես կը հրամայեմ։

ՆԷՆՆԷԼԼ

Կեցցես Մաքսիմոս։ Լաւագոյն նկարները պատերուն վրայի աղտերն են։

ՀԵԼՄԷՐ

Ո՞հ։

ՄԱՔՍԻՄՈՍ

Իրաւ է, իրաւ է։ Առաւօտը արթննալուս անոնց կը նայիմ եւ կը տեսնեմ ամպեր, ուղտեր, քարայրներ, ինքնակալ մը, անուշեղէն մը....

ՅՈՒԼԻԱ արհամարհական։

Խնայողական արուեստ։

*Աթոռին վրայ թերթ մը թուղթ կը տարածէ։*

ՀԵԼՄԷՐ

Վայրկեան մը։

*Կենդանագիրը կը հանէ գրպանէն։*

Կը գնեմ նաեւ....

ՅՈՒԼԻԱ կամաց մը։

Զգուշացէք։

*Հելմեր ծրարը կը գնէ։*

ՄԱՔՍԻՄՈՍ

Կը կարծէի թէ չհասնիմ։ Հոս ալ գարշելի օդ մը չըրա՞ւ։

ՆԷՆՆԷԼԼ

Այո։

ՅՈՒԼԻԱ աթոռին դիմաց Հելմերը ծածկելու համար։

Երէկ եւ այս գիշեր։

ՄԱՔՍԻՄՈՍ

Ոհ, հոն վերը։ Աղէտներ։ Ամէն յորդած, երկու կամուրջ կործանած, տուներ փլած, երեք անձեր հոսանքին մէջ թաւալած....

ՆԷՆՆԷԼԼ

Մեռա՞ծ։

ՄԱՔՍԻՄՈՍ

Ո՛հ։ Ո՛վ որ կ՚իյնայ։ Կէս վայրկենի մէջ։ Խեղդուելու ժամանակ անգամ չի մնար։ Փայտէ ժայռ եւ կոճղէ կոճղ զարնուած....

ՅՈՒԼԻԱ Հելմերի որ ծրարը չինեց։

Ինծի, Թանկցէք։ Կը կապեմ ես։

ՆԷՆՆԷԼԼ

Երրորդ կիրակի օր Շամունի կ՚ելլանք՝ կը տեսնենք հետքերը։

ՄԱՔՍԻՄՈՍ

Ահ, որոշեր էք ուրեմն։

ՅՈՒԼԻԱ

Իմ կողմանէս մտածեցի որ չի գամ։

*Կը սկսի կապել ծրարը զոր Հելմեր ձեռքը կը բռնէ։*

ՆԷՆՆԷԼԼ

Ի՞նչպէս։ Դուն էիր որ կը պնդէիր։

ՅՈՒԼԻԱ

Առաջին վայրկենին առաքինութիւն ծախելը ինծի ախորժելի չէ։ Կ՚անդրադառնամ եւ յետոյ որն է լաւը այն կ՚ընեմ։

ՆԷՆՆԷԼԼ

Անշուշտ։

*Մրարէն կենդանագիրը կը սահի կ՚իյնայ։*

ՄԱՔՍԻՄՈՍ Հելմերի։

Նայէ։

digitised by A.R.A.R.@

ՑՈՒԼԻԱ *ձեռքէն կը խլէ։*

ՆԷՆՆԷԼԷ *կը տեսնայ և ծիծաղ մը կը փրցնէ։*

ՄԱՔՍԻՄՈՍ *Նէննէլէի։*

Ի՞նչ կայ։

ՆԷՆՆԷԼԷ *ծիծաղելով։*

Ոչինչ։

ՑՈՒԼԻԱ *Թուղթի մէջ կը փաթթէ և կը կապէ արտորնօք։*

Յանկ։ Ասկէ վերջը ալ չի փախչիր։

*Հելմերի։*

Ջեզի։ Մինչեւ պարտէզին մուտքը հետերնիդ կ'ընկերեմ։

ՀԵԼՄԵՐ

Շնորհակալ եմ։ Օրիորդ։ Պարոն։

*Կ'երթան Հելմեր և Ցուլիա։*

## ՏԵՍԻԼ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ՄԱՔՍԻՄՈՍ, ՆԷՆՆԷԼԷ, *յետոյ* ՑՈՒԼԻԱ։

ՄԱՔՍԻՄՈՍ

Կը բացատրե՞ս ինծի։

ՆԷՆՆԷԼԷ

Զզուանք կ'ազդէ ինծի, զզուանք, զզուանք։ Այն գեղեցիկ պարոնիկին, որ իրեն չորս կողմը կը քծնի, գնել տուաւ երկու մրտո կտաւներ։ Հասկցաւ որ գնողը ինքն էր.... նոյն իսկ ինքը ինքզինքը մատնելու փափագէն կը մեռնէր։ Վարժարանի աշակերտի պատճառանքով մը գիս դուրս զրկեցին։ Չեմ գիտեր թէ ինչ մեքենայեցին, սակայն ինքը, ինքը որ առաջ խենթ էր երթալու կիրակի օր Շամունի և տեսակ մը գիտողութիւններուս համար գիս կոչեր էր, յետոյ.... խմացար.... խաչեմութիւնը։ Ա՛հ, ինչ ցած հոգի։ Եւ ես շաբաթ մը անցուցի պահապան չան գծուծի և ապուշ պաշտօնը կատարելու։ Այս ծաղրական բանը ըրի։ Կ'երեւակայես ե՞հ։ Իմ հասակիս աղջիկ մը, որ մօրուին առաքինութեանը պաշտպանութիւն կ'ընէ.... Կ'ափշի՞ս քեզի այսպէս խօսելուս վրայ։ Պէտք չէ՞ գիտնամ։ Պէտք չէ՞ տեսնամ։ Ա՛հ։ Ամենքը գիտեն և ամէնքը կը տեսնան։ Գնա բանդ։ Թատրոնի մէջ մեզի արգիլուած կատակերգութիւնները, զանոնք տանը մէջ կը տեսնանք, տանը մէջ, տանը մէջ։ Միայն կը զարմանամ որ դեռ գիս կը վիրաւորեն։ Ըսէ՛ ճշմարիտը թէ քեզի աւրուած և այլանդակ պզտիկ էակ մը չեմ երեւար։ Ի՜նչ կարեկցութիւն։ Ի՜նչ նողկանք։ Ի՞նչ կը մտածես վրաս, Մաքսիմոս.... ի՞նչ կը մտածես վրաս։

ՄԱՔՍԻՄՈՍ

Կը սորվիմ։ Կ'իմանամ որ իմ կեանքիս եղանակը, գիս շատ բաներու վրայ տգէտ թողուցեր է։ Բայց ինչ որ կը մտածեմ վրադ քեզի անախորժ չի կրնար ըլլալ։ Քու ապստամբութիւնդ շատ փրկաւէտ կը գտնամ։

ՆԷՆՆԷԼԷ

Ա՛լ հոգիս ելաւ։ Եթէ գիտնայի՜ր դու գաղափարները որ առեն առեն մաքէս կ'անցնին։ Եւ Թոմիի սիրան ալ ինծմէ խրտեցուցի։ Թոմի, որ վայելչութեան այնպէս գերազանց զգացում մը ունի, պէտք է շատ խեղճ և յիմար գտած ըլլայ իմ պահանջներս և իմ վարմունքս։ Եւ անցաւ մօրս կողմը։ Իրարու միտքը կը հասկնան։ Մէկտեղ կը ժպտին, իրարու մէջ կը խօսակցին, կը լռեն երբոր կը հասնիմ....

ՄԱՔՍԻՄՈՍ

Նախանձո՞տ ես արդեօք։

ՆԷՆՆԷԼԷ

Կարծածէս աւելի նուազ։

ՄԱՔՍԻՄՈՍ

Հպարտութիւն չըլլայ։

ՆԷՆՆԷԼԷ

Միտքս չես հասկնար։ Եւ սակայն տրտմած եմ։ Թոմիին վրայ բան մը չե՞ս գիտեր։

ՄԱՔՍԻՄՈՍ

Ոչ։ Նոր լուր մը կա՞յ։

ՆԷՆՆԷԼԷ

Չեմ գիտեր։

ՄԱՔՍԻՄՈՍ

Իրեն պաշտօնին կը զբաղի՞։

ՆԷՆՆԷԼԷ

Կարծեմ թէ։ Ամէն առաւօտ կ'ելլայ կ'երթայ, նախաճաշին կու գայ, կը դառնայ դուրս կ'ելլայ, մինչեւ կերակուրին ժամը։ Սակայն տժգոհ կերպարանք ունի։ Շատ ջանացի որ իրեն զուարթ կամք մը ներգործեմ։ Ջանացի իրեն համար կամենալ։ Կ'ըսէիր ինծի օր մը որ կամքը ամէն բանի կարող է։

ՄԱՔՍԻՄՈՍ

Եթէ աղէկ գործածուի։

ՆԷՆՆԷԼԷ

Կը կարծե՞ս դու որ կրնաս միշտ ձեռք բերել ինչ որ կամենաս։

ՄԱՔՍԻՄՈՍ

Գրեթէ միշտ։ Ժամանակով և լռութեամբ։

ՆԷՆՆԷԼԷ

Կը համարիս թէ ես ալ կարենամ։

digitised by A.R.A.R.@

ՄԱՔՍԻՄՈՍ

Կարծեմ թէ այո՛։ Այն սահմաններուն մէջ որ անտեղի չէ։ Յայտնի է թէ եթէ ուզես դու զօրաւոր մարդ մը ընել Թոմին.... որ վայելչութեան այնպէս գերազանց զգացում մը ունի։ Եւ առկէ զատ, դեռ քու հոգւոյդ մէջ բնազդումները.... կամ աւելի լաւ՝ սովորութիւնները և ողջմտութիւնը հակառակամարտ կը կռուին։

ՆԻՆՆԻԼԷ

Միտքս չես հասկնար։

ՄԱՔՍԻՄՈՍ

Ինչ որ ալ ըլլայ, մի յոգնեցներ կամքը, ունայն բաներով։ Ով որ կ'ուզէ կորսուիլ թող որ կորսուի։ Ի՞նչ կ'ուզես ընել քու մօրուիդ հետ օրինակի համար։ Ես կը կարծեմ թէ հայրդ զինքը կշռեր և գտեր է, և կը խնդրէ մէկ բան միայն, որ զինքը իրեն աշխատութենէն չարգիլէ։

ՆԻՆՆԻԼԷ

Ապստամբութիւնը չե՞ս զգար....

ՄԱՔՍԻՄՈՍ

Կ'ուզե՞ս ապստամբիլ տերեւներուն դէմ որ հովը ցիրուցան կ'ընէ։ Բանէ զանոնք եթէ կրնաս։ Այնչափ շնորհազեղութիւն ունին, և այնչափ վայելչութիւն, և չես գիտեր ուր կ'երթան կը լմննան։ Այն մարդիկը չեն լմննար։ Ոչ ալ վերջնական անզգամութիւնը պիտի ընէ երբեք. կը թաչըսին վատութենէ վատութիւն և կ'անհետանան ընդհանրական վատութեան մէջ։ Օրուան մէկը, կը դառնաս, ալ չկան։

ՆԻՆՆԻԼԷ

Թոմին վրայ ալ այսպէս կը մտածես։

ՄԱՔՍԻՄՈՍ

Դեռ չեմ գիտեր։ Այս առաւօտ՝ իրեն վերայ տեղեկութիւններ ունենալու համար՝ կ'ուզէի պարեկամիս երթալ։ Բայց այն յապաղումով։ Հեռագրեցի իրեն վերջին կայարանէն, որ հեռագրէ հոս ինծի։ Կ'իմանանք։

ՅՈՒԼԻԱ *խորէն ներս կը մտնայ։*

ՆԻՆՆԻԼԷ *հազիւ թէ զինքը կը տեսնայ,*

*Մաքսիմոսի։*

Նայէ որ հայրս կը սպասէ քեզի աշխատանոցին մէջ։

*Մաքսիմոս կը սկսի երթալ։*

Հազիւ թէ բան մը գիտնաս, եկուր ինծի ըսէ է՞հ։

*Մաքսիմոս կ'երթայ։*

Թարգմ. Հ. ԱՐԻՍՏԱԿԷՍ ՔԱՍԳԱՆՑԻԼԵԱՆ

*Շարայարելի*

# ՎԱՐԴԱՆ ԲԱՇԱ

## (ՅՈՎՍԷՓ ՎԱՐԴԱՆԵԱՆ)

ՎԱՐԴԱՆ ԲԱՇԱ բնիկ Պոլսեցի է և ծնած անցեալ իննեւտասներորդ Դարուն առաջին կիսուն, — 1813 Սեպտեմբեր 26ին[1]։

Իր հայրը — Գէորգ Աղա Վարդանեան — արուեստի ակնագործ մըն էր։

Դեռ տասնամեայ պատանեակ մըն էր Վարդան Բաշա, երբ իր մօր[2] մէկ ուխտին հետեւանօք խրկուեցաւ Վիեննա, Մխիթարեանց վանքը։

Հօն վանական առողջ և խաղաղիկ մթնոլորտին մէջ քիչ ատենէն հսկայաքայլ յառաջ դիմեց լեզուաց և ուսմանց մէջ և հօն և այն իսկ այդ հասակին մէջ՝ մատնանիշ ըրաւ իր սուր հանճարը, խուլ աշխատասիրութեան մը շնորհիւ գրաւեց իր Ուսուցչաց և Միաբանից սիրտը այնպէս որ տակաւին մինչև հիմա Վիեննական Հայոց Նորընծայարանի և վարժարանին մէջ գովեստիւ կը յիշատակուի իր ուսանողական փայլուն կեանքը։

Եթէ չ'եմ սխալիր, Վարդան Բաշա 8 տարի շարունակաբար Վիեննա Մխիթարեանց քով կեցաւ, այնպէս որ առատ և հարուստ մտաւորական պաշար մը կրցած էր արդէն համբարել, երբ կուսակրօն քահանայութեան և վարդապետութեան կոչում չ'ունենալով դարձաւ Պոլիս իր հօրենական տունը։

Վարդան Բաշա գործնական կեանքի ուղին մտած ժամանակ շատ և շատ դժուարութիւններու բախեցաւ։

---

1. Ազգային Հիւանդանոցի ընդարձակ Օրացոյցին մէջ Վարդան Բաշային ծնունդը նշանակուած է 1816ին և մահը՝ 1879ին. այս հաշուով գրագէտ բաշային կեանքէն տարիներու նուազումը կ'ունենայ, ինչ որ սակայն ափսոս է։

2. Հաշակաւոր «Երկինիրգի» Մարիամ Տու-[illegible]